ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-2251 «10» 02 2020 թ.

«ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ԵՐԻԶԱՆՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔ 1-ԻՆ ՆՐԲ, ՏՈՒՆ 5

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն մասնակի միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 12.06.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2», 08.05.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» և 01.07.2019 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126 ծածկագրերով գնման պայմանագրերի (այսուհետ՝ Պայմանագրեր) 1.1 կետերի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Վաճառողը ստանձնում է տնտեսական և գրասենյակային ապրանքների մատակարարման պարտավորությունը (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2», «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» և «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրերով գնման պայմանագրերի N 1 հավելվածների տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցներով սահմանված վերջնաժամկետները 25.12.2019 թվականն է և Ընկերությունը չի կատարել պայմանագրերով ստանձնած պարտավորությունները.

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2» ծածկագրով գնման պայմանագրի մասով չի իրականացրել 10788 ՀՀ դրամի տնտեսական ապրանքների մատակարարումը, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» ծածկագրով գնման պայմանագրի մասով չի իրականացրել 1290 ՀՀ դրամի չափով գրասենյակային ապրանքների մատակարարումը, «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրով գնման պայմանագրի մասով չի իրականացրել 14760 ՀՀ դրամի չափով գրասենյակային ապրանքների մատակարարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրերի 2.1.7 կետերի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրերով սահմանված պարտավորությունները Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ապրանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով դրանք մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129